ՀՏԴ 796.011.1 DOI: 10.53068/25792997-2025.2.15-42

ԱԹԼԵՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆԻ 80-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Է. Զ. Մարտիրոսյան, Մ.Ս. Հայրապետյան, Վ.Ա. Համբարձումյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Աթլետիկա, ցիկլիկ մարզաձևեր, գիտամեթոդական գրականություն, ֆիզիկական կուլտուրա, սպորտ, մանկավարժություն, պատմական իրադարձություն:

Հետազոտության արդիականություն: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո հանրապետությունում մեծ վերելք է ապրում արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, գիտությունը, արվեստը, մշակույթը, այդ թվում նաև՝ ֆիզկական կուլտուրան և սպորտը: Կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում ժողովրդի առողջությանը, առողջ ապրելակերպի հիմնահարցերի բարելավմանը: Ֆիզկական կուլտուրայի և սպորտի զարգացման, ինչպես նաև առողջ ապրելակերպի և առողջության բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքների իրականացման համար Հայաստանում զգացվում էր բարձրակարգ մասնագետների կարիք:

Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության Ժողկոմխորհի որոշմամբ, Հայկական մանկավարժական ինստիտուտի ֆիզկուլտուրայի ֆակուլտետի հիման վրա, 1945 թվականին իր դռները բացեց Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը: Այս պատմական իրադարձությունը դարձավ մի նոր սկիզբ՝ կրթության, գիտության և սպորտի ներդաշնակ զարգացման համար: Այն նոր հորիզոններ բացեց երիտասարդության առջև, հանրապետության միակ ու անփոխարինելի դարբնոցի՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նվիրյալների կերտման գործում [1, 4, 6, 10]:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել Աթլետիկայի ամբիոնի գիտամանկավարժական, կրթական և սպորտային ութսունամյա պատմական ուղին:

Հետազոտության խնդիրները: Ուսումնասիրել՝

1. Աթլետիկայի ամբիոնի պատմական զարգացման ուղին, ինչպես նաև ամբիոնի դերը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասնագետների և բարձրակարգ մարզիկների պատրաստման գործում:

2. Ամբիոնի դերը հայկական սպորտի պատմական ժառանգության զարգացման գործընթացներում:

Հետազոտության մեթոդներն են՝ մասնագիտական գրականության, արխիվային նյութերի և պարբերական մամուլում լուսաբանված փաստագրական տվյալների վերլուծություն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Նորաստեղծ բուհում բացվեց 13 ամբիոն, այդ թվում նաև **Աթլետիկայի ամբիոնը**, որի առաջին վարիչ նշանակվեց Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի շրջանավարտ, ԽՍՀՄ-ում մարզական բնագավառում արդեն ճանաչված մասնագետ, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, հետագայում մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ և Հայաստանի նախկին ռեկորդակիր Արամ Տեր- Հովհաննիսյանը [2, 3, 8]: Դրան նախորդած տարիներին Ա. Տեր - Հովհաննիսյանը Մոսկվայի ինստիտուտի կողմից գործուղվել էր Հայաստան՝ աթլետիկայի բնագավառում աշխատելու համար: Վերջինս զգալի աշխատանքներ էր կատարել հանրապետությունում մասնագետ կադրերի և բարձրակարգ մարզիկների պատրաստման գործում: Այդ մեծ մանկավարժի ջանքերի շնորհիվ ամբիոնը շուտով դարձավ ոչ միայն մասնագետների պատրաստման, այլև հանրապետությունում աթլետիկա մարզաձևից բարձրակարգ մարզիկների, ինչպես նաև գիտամեթոդական աշխատանքների կազմակերպման կենտրոն: Պատահական չէր, որ նա ԽՍՀՄ-ում առաջիններից մեկը պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն: Նրան հետևեցին մի խումբ շնորհալի շրջանավարտներ, որոնք կազմեցին ամբիոնի դասախոսների հիմնական կորիզը և շարունակեցին Արամ Տեր - Հովհաննիսյանի սկսած գործը: Հարկ է նշել, որ 1947թ. ինստիտուտում հաստատված Գիտական խորհրդի առաջին կազմում Ա. Տեր - Հովհաննիսյանը ընտրվել է գիտքարտուղար: Ա. Տեր - Հովհաննիսյանը ամբիոնը ղեկավարել է 1945-1948 թթ.: Այդ տարիների աթլետ–շրջանավարտները մեծ ներդրում ունեցան հանրապետության քաղաքներում և շրջաններում աթլետիկա մարզաձևի զարգացման և կայացման գործում: Ամբիոնի շրջանավարտների մի զգալի մասը աշխատանքային գործունեություն ծավալեցին ոչ միայն մեր հանրապետության շրջաններում, այլև հանրապետության սահմաններից դուրս՝ Հյուսիսային Կովկաս և միջինասիական հանրապետություններ, որտեղ նրանք իրենց ծանրակշիռ լուման ունեցան աթլետիկայի զարգացման գործում՝ դառնալով այդ հանրապետությունների վաստակավոր մարզիչներ և ֆիզիկական կուլտուրայի և սպորտի գործիչներ: Հարկ է նշել, որ Խորհրդային Միությունում մեր ինստիտուտի շրջանավարտներից երեքը՝ արժանացել են մարզչի համար ամենաբարձր պարգևին՝ «ԽՍՀՄ վաստակավոր

մարզիչի», կոչմանը, 14-ը՝ այլ հանրապետությունների վաստակավոր մարզչի և 34-ը՝ Հայաստանի Հանրապետության վաստակավոր մարզչի կոչմանը [2,3,7]:

Անհրաժեշտ է նշել, որ ամբիոնի կազմավորման հենց առաջին տարվանից, բացի ուսումնամարզական աշխատանքներից, ամբիոնն ակտիվ գործունեություն ծավալեց մարզաձևի գիտամեթոդական աշխատանքների կատարման ուղղությամբ: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ ԽՍՀՄ-ում առաջին անգամ 1948թ. ամբիոնի վարիչ Ա.Տեր-Հովհաննիսյանը հանդես եկավ համամիութենական գիտաժողովում «Շուրջտարյա մարզումների առավելությունն աթլետիկայում» թեմայով, որը հավանության արժանացավ և որոշվեց շուրջտարյա մարզումներ անցկացնել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում:

Հանրապետությունը և, մասնավորապես՝ ֆիզկուլտուրայի ինստիտուտը չուներ պարապմունքների համար համապատասխան պայմաններ, բայց կար մեծ ցանկություն, իսկ ցանկության դեպքում պայմաններ միշտ էլ կարելի է գտնել: Այսպիսով՝ «ամառային մարզաձեվից» աթլետիկան դարձավ շուրջտարյա մարզաձև և առաջին անգամ հանրապետությունում 1949թ. փետրվարին անցկացվեց ձմեռային մրցումներ մի շարք մրցաձևերից, որն անցնում է մեծ հաջողությամբ և լավ նախապայման է շուրջտարյա ուսումնամարզական աշխատանքներ կազմակերպելու համար [2, 7, 10]:

1948 թվականին Արամ Տեր-Հովհաննիսյանին հրավիրեցին Ուկրաինա՝ Լվով քաղաքում նոր բացված ֆիզկուլտուրայի ինստիտուտում՝ որպես պրոռեկտոր աշխատելու: Աթլետիկայի ամբիոնի վարիչ նշանակվեց Հայրենական մեծ պատերազմի մասնակից, Լենինգրադի Լեսգաֆտի անվան ֆիզկուլտուրայի ինստիտուտի շրջանավարտ Ալեքսանդր Սերգեյի Միրզոյանը: Ա. Միրզոյանը բավականին մեծ ջանքեր գործադրեց իր նախորդի ձեռք բերած բարձր նիշը պահպանելու և բարձրացնելու համար: Ա. Միրզոյանն այդ պաշտոնում աշխատեց մինչև 1954թ.՝ ուսանողներին հաղորդելով իր հարուստ փորձը և գիտելիքները:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտային գիտության զարգացման, տեղական կադրերի մասնագիտական որակը բարձրացնելու նպատակով սկսվում է կազմակերպվել գիտամեթոդական կոնֆերասներ: Շատ երիտասարդ մասնագետներ գործուղվում են Մոսկվա, Լենինգրադ, Կիև և միության այլ քաղաքներ՝ իրենց մասնագիտական որակը բարձրացնելու [2, 3]:

1949 թվականին ինստիտուտի առաջին աթլետ շրջանավարտների թվում էր Հրաչ Գաբրիելի Թոփալյանը, որն ինստիտուտում ստացած հարուստ գիտելիքների

շնորհիվ ընդունվեց Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի կենտրոնական ինստիտուտի ասպիրանտուրա և այն գերազանց ավարտելուց հետո ստացավ մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան և առաջարկություն այդ ինստիտուտում աշխատելու, սակայն նա հրաժարվեց այդ առաջարկից և վերադարձավ հարազատ բուհ՝ աշխատելով աթլետիկայի ամբիոնում որպես դասախոս, իսկ 1954 թվականին ղեկավարեց աթլետիկայի ամբիոնը: Հ. Գ. Թոփալյանի հարուստ գիտելիքների և արդյունավետ աշխատանքի արդյունքում 1956 թվականին ինստիտուտի ղեկավարությունը նպատակահարմար գտավ նրան նշանակել ինստիտուտի ուսումնական գծով պրոռեկտոր: Այդ պաշտոնում նա աշխատեց մինչև 1975 թվականը, որից հետո Հ. Թոփալյանը նշանակվեց Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի ռեկտոր՝ ղեկավարելով այն մինչև 1994 թվականը: Հ. Թոփալյանն իր բեղմնավոր աշխատանքային գործունեության արդյունքում արժանացել է կառավարական տարբեր պարգևների և մարզական բարձր կոչումների՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, հանրապետության վաստակավոր մարզիչ [3, 4]:

1956 թվականին ամբիոնի վարիչ է նշանակվում Անուշավան Ստեփանյանը, որն իր առջև խնդիր էր դրել ամբիոնը համալրել խոստումնալից երիտասարդ մասնագետներով, օժանդակել նրանց մասնագիտական գիտելիքները՝ խորացնելու և հնարավորության սահմաններում գիտական թեզեր պաշտպանելու գործում: 1960 թվականին ֆիզկուլտուրայի ինստիտուտը գերազանց ավարտելուց հետո նպատակային ասպիրանտուրա սովորելու համար Մոսկվա է մեկնում Ֆրունզ Գաբիրելի Ղազարյանը: Իր գիտական մկրտությունը Ֆ. Գ. Ղազարյանը ստացել է համաշխարհային համբավ ունեցող ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դպրոցում՝ պրոֆեսորներ Ն. Գ. Օզոլնի և Լ. Պ. Մատվեևի ղեկավարությամբ: Գիտական թեզը հաջողությամբ պաշտպանելուց հետո մ.գ.թ. Ղազարյանը 1965 թվականին վերադառնում է մայր բուհ և աշխատանքները շարունակում աթլետիկայի ամբիոնում: Հետագայում Ֆ. Գ. Ղազարյանն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է ինստիտուտի Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնում, 1972–1976 թթ.՝ որպես ամբիոնի վարիչ: 1975–ին արժանացել է մանկավարժական գիտությունների դոկտորական գիտական աստիճանի, լինելով առաջինը Անդրկովկասում: Ֆ. Ղազարյանը 1998–2016 թթ. եղել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի Գի-

տական և ուսումնական գծով պրոռեկտոր: Ֆ. Ղազարյանն արժանացել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի, հանրապետության վաստակավոր մարզչի կոչումներին: ՄԱԿ–ին առընթեր ինֆորմատիզացիայի միջազգային ակադեմիայի իսկական անդամ: Հեղինակ է 303 գիտական աշխատանքի, այդ թվում՝ 8 դասագիրք, 11 մենագրություն, 44 ուսումնամեթոդական ձեռնարկ, 6 պետական ծրագրեր, 133 գիտական հոդվածներ: Պարգևատրվել է ԽՍՀՄ և Հայաստանի մի շարք՝ «Պատվո նշան», «Երախտագիտություն», «Դ. Կանայան», «Խ. Աբովյան», «Հ. Շահինյան», «Եվրախորհրդի պետությունների պատվավոր քաղաքացի», Մ. Լոմոնոսովի անվան «Գիտության մեջ ներդրման» մեդալներով [2, 5, 8]:

1966 թվականին ամբիոնի վարիչ նշանակվեց Ռաֆայել Ցոլակի Հակոբյանը, որն այդ պաշտոնում աշխատեց մինչև 1977 թվականը: Այդ տարիներին ամբիոնը համալրվեց մի քանի երիտասարդ մասնագետներով, որոնցից Վալերի Մամաջանյանը մեկնեց Մոսկվա՝ սովորելու ասպիրանտուրայում, որը հաջողությամբ ավարտեց 1978 թվականին: Ռ. Հակոբյանը 1978 թվականին ընտրվեց մանկավարժական ֆակուլտետի դեկան, իսկ ամբիոնի վարիչ նշանակվեց Սերգեյ Գարեգինի Միքայելյանը, որն այդ պաշտոնում աշխատեց միչև 2000 թվականը: Այդ տարիներին ամբիոնն աչքի էր ընկնում իր կուռ մանկավարժական կոլեկտիվով: Կազմված լինելով տարբեր սերունդների մասնագետներով՝ ամբիոնում մեծ ծավալի աշխատանքներ կատարվեցին ուսումնական գիտական գործընթացը բարձր հիմքերի վրա դնելու համար: Այդ տարիներին ամբիոնի երիտասարդ դասախոսներց Աշոտ Սուրենի Սարգսյանը և Օնիկ Վարդանի Խաչատրյանը ընդունվեցին Մոսկվայի ֆիզկուլտուրայի ինստիտուտի ասպիրանտուրա և հաջողությամբ ավարտելուց հետո վերադարձան և շարունակեցին իրենց գիտամանկավարժական գործունեությունն աթլետիկայի ամբիոնում [2, 3, 9]:

Հայաստանի անկախությունից հետո՝ 1995 թվականին, աթլետիկայի ամբիոնի երիտասարդ դասախոսներից Տիգրան Սիմոնյանն առաջինն էր, որ պաշտպանեց գիտական թեզ և ստացավ մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Հետագայում նա դարձավ մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան, իսկ 2024 թվականից Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ռեկտոր [1, 6, 8]:

2000 թվականից ամբիոնը ղեկավարեց ԽՍՀՄ սպորտի վարպետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վալերի Միերի Մամաջանյանը, որը ջանք չխնայեց ամբիոնի աշխատանքները բարելավելու ուղղությամբ [2, 3]:

2013 թ. ամբիոնի երիտասարդ դասախոս Վարդան Սմբատյանը, պաշտպանեց գիտական թեզ՝ ստանալով մանկավարժական գիտությունների թեկնածուի աստիճան: Վ. Մամաջանյանի ղեկավարության ժամանակահատվածում մեծ ուշադրության դարձվեց մայրենի լեզվով ուսումնական գրականության հրատարակմանը: 2003 թվականին հրատարակվեց ամբիոնի դասախոսների ուժերով կազմված «Աթլետիկա» ուսումնական ձեռնարկը, որն ի սկզբանե նախատեսված էր ինստիտուտի ոչ մասնագետ ուսանողների համար, սակայն այն մեծ հաջողությամբ կիրառվում է նաև աթլետ մասնագետների կողմից: Այդ տարիներին մայրենի լեզվով մասնագիտական գրականության ստեղծման նպատակով աթլետիկայի առանձին մրցաձևերի վերաբերյալ հեղինակային հրատարակություններ թողարկեցին ամբիոնի դասախոսներ Վ. Մամաջանյանը «Աթլետիկական բազմամարտ», 2005թ., «Աթլետիկա. կանանց բազմամարտ», 2011թ., «Աթլետիկա. խոչընդոտավազք», 2020թ.:

Վ. Համբարձումյանը 2007թ. հրատարակեց «Աթլետիկա: Գնդի հրում և սկավառակի նետում» ուսումնական ձեռնարկը: 2008 թ. Կ. Բաբայանի հեղինակային հրատարակությունը կոչվում է «Հեռացատկի և եռացատկի տեխնիկան, ուսուցման մեթոդիկան և մարզումը»: Մ. Հայրապետյանը հեղինակ է հետևյալ ուսումնական ձեռնարկների՝ «Աթլետիկա: Արագավազք և փոխանցավազք», 2008թ., «Մանկական աթլետիկա», 2015թ., «Աթլետիկա: Միջնավազք, հեռավազք, գերհեռավազք», 2016թ.: Է. Մարտիրոսյանը 2010թ. հրատարակել է «Աթլետիկա: Աշխարհի ռեկորդները» տեղեկագիրքը: Ս. Թորոյանը, Տ. Սիմոնյանը, Վ. Սմբատյանը համատեղ 2015 թվականին հրատարակել են «Աթլետիկա: Բարձրացատկ և ձողացատկ» ուսումնական ձեռնարկը: Այս ամենով հանդերձ ուսումնամարզական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար հսկայական նշանակություն ունի Մոսկվայի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի համար հրատարակված «Թեթև ատլետիկա» դասագրքի երկու հատորների հայերեն թարգմանությունը, որն իրականացրել է ամբիոնի լավագույն մասնագետներից պրոֆեսոր Ռ. Ց. Հակոբյանը՝ թարգմանիչ Ի. Հ. Պողոսյանի հետ միասին: Այդ դասագիրքը, չնայած վաղ հրատարակությանը, այնուամենայնիվ, արդիական է նաև մեր ժամանակների համար: Պրոֆեսոր Վ. Մամաջանյանն ամբիոնը ղեկավարել է մինչև 2019 թվականը:

Ամբիոնն իր գոյության ընթացքում հսկայական գործունեություն է ծավալել աթլետ մասնագետների հետ տարվող գիտական և մարզական աշխատանքների գծով: Բազմաթիվ դասախոսներ և ուսանողներ գիտական զեկուցումներով հանդես

են եկել ինչպես հանրապետական, այնպես էլ համամիութենական, իսկ անկախությունից հետո նաև միջազգային գիտաժողովներում:

Աթլետ մասնագետների հաջողությունները մեծ են նաև սպորտի ասպարեզում: Առաջին անվանի ուսանող - աթլետը Վարդան Հովսեփյանն է, որը բարձր արդյունքներ է ցուցաբերել գնդի հրման հատվածում: Վ. Հովսեփյանը 1954 թվականին Բուդապեշտում կայացած համաշխարհային ուսանողական խաղերում նվաճել է ոսկե մեդալ: ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետն ավելի քան հինգ տարի իրեն հավասարը չունեցավ Եվրոպայում՝ սահմանելով տասնյակից ավելի ռեկորդներ. հինգ անգամ դառնալով ԽՍՀՄ և Եվրոպայի չեմպիոն [2, 6, 7]:

Հիշատակման են արժանի ամբիոնի աթլետ ուսանողներ՝ Գենադի Բարսեղյանը, Հովհաննես Մկրտչյանը, Գրիգոր Պետրոսյանը, Պարգև Գրիգորյանը, Շիրակ Պողոսյանը, Մերուժան և Մարատ Սարգսյանները, Վահագ Ջավախյանը, Վարդան Փահլևանյանը, Էրիկ Նուրիջանյանը, Արման Անդրեասյանը և ուրիշներ: Սակայն ամբիոնի ուսանող-մարզիկներից անգերազանցելի են մնում Ֆաինա Մելնիկը և Արմեն Մարտիրոսյանը: Ֆաինա Մելնիկը՝ տաղանդավոր մարզուհին, ոչ միայն սկավառականետումից և գնդի հրումից սահմանեց աշխարհի և ԽՍՀՄ բազմաթիվ ռեկորդներ, այլև 1972 և 1976 թվականներին դարձավ օլիմպիական խաղերի չեմպիոն և մրցանակակիր: Արմեն Մարտիրոսյանը 1996թ. Ատլանտայի օլիմպիական խաղերում եռացատկ մրցաձևում գրավեց պատվավոր հինգերորդ տեղը, իսկ Եվրոպայի ձմեռային առաջնությանը արժանացավ բրոնզե մեդալի: Աթլետիկայի ամբիոնն իր գոյության ընթացքում պատրաստել է բազմաթիվ ԽՍՀՄ սպորտի վարպետներ, համամիութենական, միջազգային և հանրապետական մրցումների հաղթողներ, մրցանակակիրներ, հանրապետության ռեկորդակիրներ [2, 8]:

Ամբիոնն իր գործունեության ընթացքում մեծ ծավալի աշխատանքներ է կատարել ինստիտուտում, Երևանում և հանրապետության այլ մարզերում աթլետիկան, առողջ ապրելակերպը քարոզելու, մասսայականացնելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարի անցկացվել է ինստիտուտի սպարտակիադա կուրսերի միջև՝ այդ թվում նաև աթլետիկայից, օղակաձև փոխանցավազք Երևան քաղաքում, որին մասնակցում էին հանրապետության բուհերի մեծամասնությունը, յուրաքանչյուր տարի կրոսավազք է անցկացվել Երևան քաղաքի տարբեր վայրերում, անցկացվել են ինստիտուտի առաջնություն աթլետիկայից, հուշամրցումներ՝ նվիրված Մ. Վեքիլյանին: Մեծ է եղել կապը համամիութենական մասշտաբով. մեր ինստիտուտի հավաքական թիմերը մասնակցել են տարբեր համամիութենական մրցումների, որոնցից արժե հիշատակել Լ. Ռատուշնոյին նվիրված հուշամրցումները

Վինեցայում, Մոսկվայի Բաումանի տեխնիկական ուսումնարանի հետ փոխադարձաբար անցկացվող մրցումները, ՊԱՊ համալիրի շրջանակում անցկացված մրցումները, ամբիոնի ուսանողների ուժերով Երևան քաղաքի տարբեր ուսումնական հաստատություններում տարիներ շարունակ անցկացվել են մրցումներ «Մանկական աթլետիկա» ծրագրով, դպրոցական մանկավարժական պրակտիկայի ընթացքում բազմաթիվ մրցումներ են անցկացվել հանրակրթական դպրոցի աշակերտների հետ և, էլի շատ միջոցառումներ Հայաստանում [6, 7, 8]:

Արժե հիշատակել հասարակական աշխատանքներում մեր դասախոսների ներգրավվածությունը Երևան քաղաքի և աթլետիկայի հանրապետական ֆեդերացիայի աշխատանքներում: Բացի այն, որ ամբիոնի դասախոսներից Մ. Վեքիլյանը, Ռ. Հակոբյանը, Ս. Միքայելյանը ղեկավարել են Երևան քաղաքի աթլետիկայի ֆեդերացիան, մեծ թիվ էր կազմում նաև դասախոսների ներգրավածությունը Աթլետիկայի հանրապետության ֆեդերացիաների նախագահության կազմում, որոնք ղեկավարել են տարբեր հանձնաժողովներ՝ Ս. Միքայելյանը երկար ժամանակ հանրապետական ֆեդերացիայի փոխնախագահն էր, Ս. Թորոյանը՝ նույնպես երկար ժամանակ ղեկավարեց մրցավարական հանձնաժողովը: Ս. Թորոյանին փոխարինեց Տ. Սիմոնյանը: Աթլետիկայի ազգային հավաքականը 20 տարի գլխավորեց Մ. Հայրապետյանը: Վ. Մամաջանյանը ֆեդերացիայի նախագահության անդամ էր:

Մեծ է ամբիոնի դասախոսների ներգրավվածությունը հատուկ կարիք ունեցող անձանց համար մարզական միջոցառումների կազմակերպման և անցկացման գործում: Է. Մարտիրոսյանը 2007-ից ղեկավարում է «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպության մարզական միջոցառումները և աթլետիկայի գլխավոր մարզիչ: Է Մարտիրոսյանի անձնական սաները դարձել են «Հատուկ օլիմպիադաներ» աշխարհի և Եվրոպայի չեմպիոն ու մրցանակակիրներ:

Ամբիոնի դասախոսները՝ որպես մրցավար սպասարկել են 1980 թվականի Մոսկվայի ամառային օլիմպիական խաղերը: Նրանցից Սիմոն Թորոյանը, Մարգարիտա Կարապետյանը և Ռուբեն Գաբրիելյանը արժանացել են «Պատվավոր մրցավար» կոչմանը: Վերջին տարիներին մրցավարության մեջ հատկապես աչքի են ընկել Տ. Սիմոնյանը և Վ. Սմբատյանը, որոնք, մասնակցելով մի շարք միջազգային դասընթացների, կատարել են միջազգային մրցումներում գլխավոր մրցավարի, տեսուչի և մրցավարի պարտականություն [7, 8]:

2020 թվականին ինստիտուտում տեղի ունեցած կառուցվածքային փոփոխության արդյունքում ձևավորվեց Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնը, որում միավորվեցին

աթլետիկա, լող, դահուկասպորտ, հրաձգություն և հեծանվասպորտ մարզաձևերը: Ամբիոնի վարիչ ընտրվեց Վարդան Սմբատյանը, որը 2024 թվականին ընտրվեց Մարզչամանկավարժական ֆակուլտետի դեկան: Նույն թվականին Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ ընտրվեց Էրիկ Մարտիրոսյանը:

Նոր ձևավորված ամբիոնն ունի մեծ գիտամանկավարժական ներուժ, որը ամբիոնի աշխատանքային գործունեության բացառիկ առավելություններից է: Ամբիոնի դասախոսներից չորսը բուհի գիտական խորհրդի անդամներ են: Ինստիտուտում գործող Բարձրագույն կրթության գիտության կոմիտեի «Մանկավարժության 065» մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար է ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Արմեն Հակոբյանը: Իր ստեղծման կարճ ժամանակահատվածում Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնն ունեցավ առաջին հաջողությունը. 2020 թվականին բուհում գործող «Մանկավարժություն 065», մասնագիտական խորհրդում իր գիտական թեզը պաշտպանեց Էրիկ Մարտիրոսյանը:

Մարզական ոլորտում նույնպես ամբիոնը շարունակում է լավագույն ավանդույթները՝ մեր մարզիկ ուսանողները մասնակցել են՝ Օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին՝ Գայանե Չիլոյան, (Աթլետիկա) Վարսենիկ Մանուչարյան, (Լող) Միքայել Միքայելյան (Դահուկասպորտ) Նորայր Առաքելյան (Հրաձգություն), Վահե Վիրաբյան (Հեծանվասպորտ):

Ամբիոնի մի շարք դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ ակտիվ մասնակցություն ունեցան Արցախի անկախության համար մղվող ազատագրական պայքարում: Ցավոք, նրանցից ոմանք խիզախի մահով ընկան մարտի դաշտում:

Ամբիոնը շարունակում է իր արհեստավարժ մասնագիտական և մանկավարժական գործունեությունը՝ հանրապետության համար պատրաստելով բարձրակարգ մասնագետներ:

Եզրակացություն: Աթլետիկայի ամբիոնը հայկական սպորտի և ֆիզիկական կուլտուրայի զարգացման գիտակրթական հիմնասյուներից մեկն է՝ թե՛ հարուստ ավանդույթներով, թե՛ անցյալի ձեռքբերումներով, թե՛ ներկայի շարունակական զարգացմամբ: Այն շարունակելու է իր առաքելությունը՝ մնալով բարձրակարգ մասնագետների պատրաստման առաջատար կրթական հարթակ:

Ամբիոնը շարունակում է իր ակտիվ գործունեությունը գիտակրթական և մարզական ոլորտներում: Հրատարակվել է բազմաթիվ գիտական աշխատանքներ, ուսումնական և մեթոդական ձեռնարկներ ու դասագրքեր: Ամբիոնի լավագույն սա-

ներն իրենց մարզչական կարիերայի ընթացքում պատրաստել են համաշխարհային աթլետիկայում հայտնի մարզիկներ՝ օլիմպիական խաղերում, աշխարհի և եվրոպայի առաջնության հաղթողներ և մրցանակակիրներ:

2020-ից ձևավորվել է **Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնը**, որտեղ ընդգրկված են աթլետիկա, լող, դահուկասպորտ, հեծանվասպորտ և հրաձգություն մարզաձևերը:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթայան Կ. Ի. Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, Եր., 2003, 424 էջ:
2. Առաքելյան Վ. Բ., Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի (համառոտ տարեգրությունը) Եր., 2005, 121 էջ:
3. Իսպիրյան Մ. Ս., Առաքելյան Վ. Բ., Մարզական հանրագիտարան, Եր., 2003, 350 էջ:
4. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 12, Եր., 1986, էջ 648:
5. Ղազարյան Ֆ. Գ., Մարդու շարժողական ընդունակությունները և բազմակողմանի ներդաշնակ զարգացումը, Երևան, 2024, 152 էջ:
6. Սպորտային կադրերի դարբնոց Երևան, 1976, 41 էջ
7. Վեքիլյան Մ.Մ., Թեթև աթլետիկան Երևանում (Օգնություն ֆիզկուլտուրային կոլեկտիվներին) Երևան, 1986, 104 էջ:
8. Մամաջանյան Վ.Մ. Ընդհանուր խմբագրության, Աթլետիկա, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2003, 187 էջ:
9. Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը 50 տարեկան է, Երևան, 1995, 113 էջ:
10. https://surli.cc/jiwpev [մուտք՝ 20.05.2025]

THE 80-YEAR PATH OF THE ATHLETICS DEPARTMENT: HISTORICAL REVIEW

E. Z. Martirosyan, M. S. Hayrapetyan, V. A. Hambardzumyan,
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: Athletics, cyclic sport, scientific-methodical literature, physical culture, sport, pedagogy, historical events

Research relevance: After the victory of Great Patriotic War, in the republic there was a growth in industry, agriculture, science, art, culture, including physical culture and sport. People's health was of great interest for the government. However, especially for the implementation of work aimed at the development of physical culture and sport, there was a need for highly qualified specialists in Armenia.

By the decision of the Council of People's Commissars of the Armenian Soviet Socialist Republic, the Armenian State Institute of Physical Culture opened its doors in 1945 on the basis of the Faculty of Physical Culture of the Armenian Pedagogical Institute. This historical event became a new beginning for the harmonious development of body and soul. It opened new horizons for youth in Armenia, and became the only place where the high-quality specialists and sports enthusiasts were educated. The chair of Athletics, currently the chair of Cyclic Sports, where athletics, swimming, shooting, skiing and cycling specialties cooperate, played a unique role in this patriotic work [3, 5].

Research aim: The aim of the study was to examine the eighty-year scientific-pedagogical, educational and pedagogical history of the Chair of Athletics.

Research methods and organization: 1) the historical path of development of the Athletics Chair; 2) the role of the Chair of Athletics in training the specialists in the field of physical education and sport; 3) the contribution of the Chair of Athletics to the development and preservation of the Armenian sports heritage.
Analysis of documentary data presented in professional literature and periodicals.

Research result analysis: The formation and development of the Chair of Athletics is one of the important achievements of Armenian sports education and pedagogy. The Department has brought together professionals of different generations who have made a great contribution not only to education, but also to sports, scientific and social

spheres. The Chair has formed a powerful human resource base of high-quality specialists. Prominent graduates have headed the institute, as well as various educational, sports and social structures.

Conclusion: With rich traditions, achievements, as well as continuous development, the Chair of Athletics has become one of the scientific and educational pillars of Armenian sports and physical culture. The Chair continues to fulfill its mission, remaining a leading educational platform for the training of highly qualified specialists. It actively carries out activities in the scientific, educational and sports fields, preparing personnel meeting modern requirements.

80-ЛЕТНИЙ ПУТЬ: КАФЕДРЫ ЛЁГКОЙ АТЛЕТИКИ ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР

Э. З. Мартиросян, М. С. Айрапетян, В. А. Амбарцумян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: легкая атлетика, циклические виды, научно-методическая литература, физическая культура, спорт, педагогика, историческое событие.

Актуальность исследования. После победоносного завершения Великой Отечественной войны в республике начался значительный подъём в промышленности, сельском хозяйстве, науке, искусстве, культуре, а также в области физической культуры и спорта. Правительство уделяло большое внимание улучшению состояния здоровья населения. Особенно ощущалась потребность в квалифицированных специалистах для развития физической культуры и спорта в Армении.

По решению Совета народных комиссаров Армянской Советской Социалистической Республики на базе факультета физической культуры Армянского педагогического института в 1945 году открыл свои двери Армянский государственный институт физической культуры. Это историческое событие стало новым началом для гармоничного развития тела и духа. Оно не только открыло новые горизонты перед армянской молодежью, но и превратилось в единственную и незаменимую кузницу республики по подготовке высококвалифицированных специалистов и преданных делу спорта людей. Особое место в этой патриотической и ответствен-

ной работе заняла кафедра лёгкой атлетики, ныне именуемая «Кафедрой циклических видов спорта», где осуществляется подготовка специалистов в области лёгкой атлетики, плавания, стрельбы, лыжного спорта и велоспорта [3, 5].

Целью исследования было изучить восьмидесятилетнюю научно-педагогическую, образовательную и педагогическую цпортивную историю кафедры легкой атлетики.

Задачами исследования являлось представить: 1) Изучить историческое развитие кафедры легкой атлетики. 2) Роль кафедры в подготовке специалистов в области физической культуры и спорта; 3) Вклад кафедры в дело развития и сохранения армянского спортивного наследия.

Методы и организация исследования. Методы исследования: Анализ документальных данных, представленных в профессиональной литературе и периодической печати.

Анализ полученных результатов. Формирование и развитие кафедры лёгкой атлетики является одним из важнейших достижений армянского спортивного образования и педагогики. Кафедра объединила профессиональных специалистов разных поколений, которые внесли значительный вклад не только в учебную, но и в спортивную, научную и общественную сферы. Кафедра сформировала мощную кадровую базу высококвалифицированных специалистов. Выдающиеся выпускники возглавляли институт, а также руководили различными образовательными, спортивными и общественными организациями.

Краткые выводы. Обладая богатыми традициями, достижениями в прошлом, а также продолжительным развитием в настоящем, кафедра лёгкой атлетики стала одной из научно-образовательных опор армянского спорта и физической культуры. Кафедра продолжает выполнять свою миссию, оставаясь ведущей образовательной платформой по подготовке высококвалифицированных специалистов. Она активно осуществляет деятельность в научно-образовательной и спортивной сферах, готовя кадры, соответствующие современным требованиям.

Տեղեկություններ հեղինակների մասին

Էրիկ Զավենի Մարտիրոսյան՝ մ.գ.թ., Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի վարիչ, դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: erik.martirosyan@sportedu.am, ORSID: 0009-0002-5171-1761

Միշա Սահակի Հայրապետյան՝ Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի պրոֆեսոր, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: misha.hayrapetyan@sportedu.am

Վաչիկ Արամի Համբարձումյան՝ Ցիկլիկ մարզաձևերի ամբիոնի դոցենտ,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: vachik.hambarchumyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 02.04.2025–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 03.04.2025–ին:
Գրախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյան